

# ՍԻԱՍԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2015

## ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

### ԹԵՍ 7

Խմբի համարը

Նստարանի համարը

#### Հարգելի՝ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը և պատասխանների առաջարկվող տարրերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց բողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ճևարուղը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ճևարուղում: Պատասխանների ճևարդի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

**Ցանկանում ենք հաջողություն:**

## Ա մակարդակ

1

Որո՞նք չեն մտնում բարձրակարգ բույսերի ենթաքաղաքության մեջ.

- 1) մերկասերմերը
- 2) ջրիմուռները
- 3) մամուռները
- 4) գետնամուշերը

2

Ո՞ր դասին է պատկանում եզան լեզուն, և ինչպի՞ս է նրա արմատային համակարգը.

- 1) երկարիլավորների. արմատային համակարգը առանցքային է
- 2) միաշարիլավորների. արմատային համակարգը փնջածն է
- 3) երկարիլավորների. արմատային համակարգը փնջածն է
- 4) միաշարիլավորների. արմատային համակարգը առանցքային է

3

Ո՞ր օրգան-համակարգերը չունի սպիտակ պլանարիան.

- 1) մարսողական և նյարդային
- 2) շնչառական և արտազատական
- 3) արտազատական և մարսողական
- 4) արյունատար և շնչառական

4

Ո՞ր կենդանիների սրտում զարկերակային արյունը չի խառնվում երակային արյանը.

- 1) գորտերի
- 2) օձերի
- 3) ոսկրային ձկների
- 4) ժայռային մողեսների

5

Ծան օրգանիզմում որտե՞ղ է արտադրվում լեղին.

- 1) տասներկումատնյա աղիում
- 2) ենթաստամոքսային գեղձում
- 3) լեղապարկում
- 4) լյարդում

6

Ի՞նչ հաջորդականությամբ են հարուցվում կառուցվածքային տարրերի տատանումները մարդու լսողական զգայարանում.

- 1) թմբկաթաղանթ-մուրճ-ասպանդակ-սալ-ձվածն պատուհանի թաղանթ
- 2) թմբկաթաղանթ-մուրճ-սալ-ասպանդակ-ձվածն պատուհանի թաղանթ
- 3) ձվածն պատուհանի թաղանթ-ասպանդակ-սալ-մուրճ-թմբկաթաղանթ
- 4) թմբկաթաղանթ-ասպանդակ-սալ-մուրճ-ձվածն պատուհանի թաղանթ

7

**Ո՞րն է էրիքրոցիտների հիմնական գործառույթը.**

- 1) թթվածնի և ածխաթթու գազի փոխադրումը
- 2) վարակների դեմ պայքարը
- 3) արյան թանձրուկի առաջացումը
- 4) անոքների պատերի հաստացման կանխարգելումը

8

**Ո՞րն է զլիսի կմախքի շարժուն ռսկորը.**

- 1) վերին ծնոտը
- 2) քրոսկրը
- 3) այտոսկրը
- 4) ստորին ծնոտը

9

**Ի՞նչ դեր է կատարում լեղին մարդու օրգանիզմում.**

- 1) բուլացնում է աղիների շարժողական ակտիվությունը
- 2) խթանում է նեխսման գործընթացները
- 3) արգելակում է մարսողական ֆերմենտների արտադրությունը
- 4) նպաստում է ճարպերի էմուլսացմանը և ներծծմանը

10

**Նշված ոեֆլեքսներից ո՞րն է պայմանական.**

- 1) ստամոքսի ոեֆլեքսային հյութազատումը նորածին երեխայի մոտ
- 2) միզարձակման ոեֆլեքսը նորածին երեխայի մոտ
- 3) թքազատումը՝ կիտրոն տեսնելիս
- 4) կլլման ոեֆլեքսը

11

**Ի՞նչ հիվանդություն է առաջանում B<sub>1</sub> վիտամինի քերվիտամինոզից.**

- 1) ցինգա
- 2) բերի-բերի
- 3) ռախիտ
- 4) հավկուրություն

12

**Մարդու օրգանիզմում որո՞նք են մաշկի էպիթելի ածանցյալներ.**

- 1) մազերի դիրքը փոխող մկանաթելերը
- 2) մազերը
- 3) ճարպագեղձերը
- 4) ենթամաշկային բջջանքը

13

**Տրանսկրիպցիայի և տրանսլյացիայի գործընթացները եռկարիուս քիչներում տեղի են ունենում.**

- 1) ոիրոսումներում և հարթ էնդոպլազմային ցանցում
- 2) բջջակորիզում և հարթ էնդոպլազմային ցանցում
- 3) ոիրոսումներում և հատիկավոր էնդոպլազմային ցանցում
- 4) բջջակորիզում և հատիկավոր էնդոպլազմային ցանցում

14

**Որո՞նք են պրոկարիոտներ.**

- 1) ջրիմուռները և մամուռները
- 2) նախակենդանիները և սնկերը
- 3) քեմոսինթեզող բակտերիաները և բակտերիաֆագերը
- 4) բակտերիաները և կապտականաչ ջրիմուռները

15

**Թաղանթային կառուցվածք չունեցող օրգանիզմների թվին են պատկանում.**

- 1) Գոլջիի ապարատն ու ոիբրոսումները
- 2) լիզոսումներն ու վակուումները
- 3) ոիբրոսումներն ու բջջային կենտրոնը
- 4) ոիբրոսումներն ու միտոքոնդրիումները

16

**Էուկարիոտիկ բջջում ԱԵՖ-ի սինթեզը հիմնականում տեղի է ունենում.**

- 1) միտոքոնդրիումներում
- 2) ոիբրոսումներում
- 3) էնդոպլազմային ցանցում
- 4) Գոլջիի ապարատում

17

**Աղիքային ցուալիկի T4 բակտերիաֆագի բաղադրության մեջ մտնում են.**

- 1) կամ Π-ՆԹ, կամ Τ-ՆԹ և սպիտակուց
- 2) Π-ՆԹ, սպիտակուց և լիպիդներ
- 3) Π-ՆԹ, Τ-ՆԹ և սպիտակուց
- 4) Τ-ՆԹ և սպիտակուց

18

**Որտե՞ղ են սինթեզվում ֆերմենտները.**

- 1) հատիկավոր էնդոպլազմային ցանցի վրա
- 2) ողորկ էնդոպլազմային ցանցի վրա
- 3) Գոլջիի ապարատի թաղանթների վրա
- 4) պլազմային թաղանթի վրա

19

**Ֆուսոսինթեզի լուսային փուլի ընթացքում տեղի են ունենում.**

- 1) մոլեկուլային թթվածնի, ատոմային ջրածնի և ածխաջրերի առաջացում
- 2) մոլեկուլային թթվածնի առաջացում, ԱԵՖ-ի սինթեզ և ածխաջրերի առաջացում
- 3) մոլեկուլային թթվածնի առաջացում, ԱԵՖ-ի սինթեզ և ատոմային ջրածնի առաջացում
- 4) ԱԵՖ-ի սինթեզ, ատոմային ջրածնի և ածխաջրերի առաջացում

20

Ո՞րն է սեռական բազմացման ձև.

- 1) վեգետատիվ բազմացումը
- 2) կուսածնությունը
- 3) բողբոջմամբ բազմացումը
- 4) ֆրազմենտացումը

21

Ո՞ր օրգանիզմներին է քնորոշ բողբոջման միջոցով բազմացումը.

- 1) ծովաստղերին, որոշ ջրիմուռների
- 2) տափակ որդերին
- 3) միայն խմորասնկերին
- 4) խմորասնկերին, հիդրաներին, հիդրոիդ և կորալյան պոլիպներին

22

Քանի՞ ֆենոտիպային և գենոտիպային խմբեր են ստացվում երկու երկինութեանոցուն առանձնյակների խաչասերման արդյունքում՝ զույգ ալելներով լրիվ դոմինանտության և գեների անկախ բաշխման դեպքում.

- 1) 4 ֆենոտիպային և 16 գենոտիպային ձևեր
- 2) 4 ֆենոտիպային և 9 գենոտիպային ձևեր
- 3) 16 ֆենոտիպային և 4 գենոտիպային ձևեր
- 4) 9 ֆենոտիպային և 4 գենոտիպային ձևեր

23

Ո՞ր միջատներն են զարգանում լրիվ կերպարանափոխությամբ.

- 1) խավարասերները
- 2) ծղրիդները
- 3) մորեխները
- 4) մրջյունները

24

Ի՞նչ է քնորոշ գենային մուտացիաներին.

- 1) քրոմոսոմների հատվածների դիրքի փոփոխումը
- 2) քրոմոսոմների հապլոիդ հավաքի ոչ բազմապատիկ փոփոխումը
- 3) ԴՆԹ-ում նուկլեոտիդների հաջորդականության փոփոխումը
- 4) քրոմոսոմների հապլոիդ հավաքակազմի բազմապատիկ փոփոխումը

25

Ինչե՞ր չեն առաջանում աճման գոտու մեկ առաջնային սեռական բջջից սերմնարանի հասունացման գոտում.

- 1) երկրորդ կարգի սպերմատոցիտներ
- 2) սպերմատիդներ
- 3) սպերմատոզոնիումներ
- 4) չորս սպերմատոզոնիդներ

26

Ո՞ր օրգաններն են առաջանում էնտոդերմից սաղմնային զարգացման ընթացքում.

- 1) աղիների, խոհկմների և բոքերի էպիթելլ
- 2) մկանները, նյարդերը, աղիները, երիկամները
- 3) զգայարանները, նյարդերը, բոքերը, մաշկի էպիթելլ
- 4) միզածորանները, միզուկը, գլխուղեղը, լսողության օրգանները

27

Փոփոխականության ո՞ր ձևն է ոչ ժառանգական.

- 1) համակցական փոփոխականությունը
- 2) մուտացիոն փոփոխականությունը
- 3) կորիզային փոփոխականությունը
- 4) ֆենոտիպային փոփոխականությունը

28

Ո՞ր հատկանիշն ունի ռեակցիայի նեղ նորմա.

- 1) բույսի բարձրությունը
- 2) կովերի կաթնատվությունը
- 3) աչքերի գույնը
- 4) սերմերի զանգվածը

29

Ի՞նչ է ինվերսիան.

- 1) ոչ հոմոլոգ քրոմոսոմի հատվածի փոխանակում
- 2) քրոմոսոմի հատվածի պտույտ  $180^0$ -ով
- 3) քրոմոսոմի հատվածի կորուստ
- 4) քրոմոսոմի հատվածի ձեռքբերում

30

Ինչպե՞ս է կոչվում տեսակի ներսում հատկանիշների տարամիտման գործընթացը.

- 1) դիվերգենցիա
- 2) արոմորֆոզ
- 3) կոնվերգենցիա
- 4) իդիոադապտացիա

31

Ինչպե՞ս է կոչվում փոխարարերությունների այն ձևը, որի դեպքում տեսակներից միայն մեկն է օգուտ ստանում՝ առանց վնասելու մյուս տեսակին.

- 1) ամենսալիզմ
- 2) կոռպերացիա
- 3) կոմենսալիզմ
- 4) մուտուալիզմ

32

Կենդանի նյութի ո՞ր ֆունկցիայի հետ է կապված ծծմբի և երկարի հանքերի առաջացումը.

- 1) կուտակող
- 2) միջավայր գոյացնող
- 3) էներգիական
- 4) դեստրուկտիվ

33

Ո՞ր օրգանիզմներն են ստեղծում առաջնային կենսաբանական արտադրանք.

- 1) բույսերը և սնկերը
- 2) սնկերը
- 3) առաջին կարգի կոնսումենտները
- 4) բույսերը և որոշ բակտերիաներ

34

Ո՞ր բակտերիաներն են ազոտն արտազատում մթնոլորտ.

- 1) նիտրիֆիկացնող և դենիտրիֆիկացնող
- 2) բոլոր սապրոֆիտ
- 3) դենիտրիֆիկացնող
- 4) ամոնիֆիկացնող

(35-36) Ծածկասերմ բույսի առէջներից մեկում առաջացել է 1000000 փոշեհատիկ:

35

Քանի՞ սպերմիումներ են դրանք պարունակում.

- 1) 500000
- 2) 1000000
- 3) 2000000
- 4) 4000000

36

Քանի՞ վեգետատիվ քջից են դրանք պարունակում.

- 1) 1000000
- 2) 500000
- 3) 2000000
- 4) 4000000

- (37-38) Սպիտակուցի սինթեզը պայմանավորող ի-ՈՒԹ-ի մոլեկուլային գանգվածը 270000 գ.ա.մ. (գանգվածի ատոմական միավոր) է: Ամինաթթուների միջին մոլեկուլային գանգվածը 120 գ.ա.մ. է, նույնականացնելու համար՝ 300 գ.ա.մ:

37

Որոշել գենի երկարությունը (նանոմետր), եթե հայտնի է, որ մեկ նույնականացնելու համար առաջանակը 0,34 նանոմետր է:

- 1) 306
- 2) 765
- 3) 1530
- 4) 712

38

Գտնել տվյալ գենից ստացվող սպիտակուցի մոլեկուլային գանգվածը.

- 1) 18000
- 2) 72000
- 3) 90000
- 4) 36000

- (39-40) Մնան շղթան կազմված է հետևյալ օղակներից՝ ֆիտոպլանկտոն-զռոպլանկտոն-մանր ձուկ-խոշոր ձուկ-փոկ: Կենդանու գանգված է անցնում կերած սննդի գանգվածի 10 %-ը, և ընդունենք, որ յուրաքանչյուր սննդի մակարդակ օգտագործում է միայն նախորդ սննդի մակարդակի ներկայացուցիչներին:

39

Քանի՞ կգ սկզբնական կենսագանգված է անհրաժեշտ խոշոր ձկան գանգվածը 1 կգ-ով ավելանալու համար.

- 1) 1000
- 2) 100000
- 3) 100
- 4) 11110

40

Ամբողջ շղթայում քանի՞ կգ է կազմում գանգվածի ընդհանուր կորուստը փուկի գանգվածը 2 կգ-ով ավելանալու համար.

- 1) 19998
- 2) 2000
- 3) 1000
- 4) 9998

41

## Նշել բոլոր ճիշտ պնդումները.

- գենոտիպի փոփոխման հետ չկապված փոփոխականությունը կոչվում է մողիֆիկացիոն փոփոխականություն
- սումատիկ մուտացիաները կենդանիների սեռական բազմացման ժամանակ չեն փոխանցվում հաջորդ սերունդներին
- մողիֆիկացիոն փոփոխականությունը ժառանգվում է սերնդեսերունդ
- Էղվարդսի սինդրոմն անեռավլորդիայի հետևանք է
- մողիֆիկացիոն փոփոխականությունը կախված չէ միջավայրի պայմաններից
- հատկանիշի մողիֆիկացիոն փոփոխականության սահմանները կոչվում են նրա ռեակցիայի նորմա

42

## Նշել բջջակորիզի վերաբերյալ բոլոր ճիշտ պնդումները.

- քրոմատինը ԴՆԹ-ի, հիստոնային և ոչ հիստոնային սպիտակուցների համալիր է
- քրոմատինի հիստոնային սպիտակուցները հարուստ են արգինին և լիզին ամինաթթուների մնացորդներով, ինչը այդ սպիտակուցներին տալիս է բրվային հատկություններ
- կորիզակները ձևավորվում և մանրադիտակի տակ տեսանելի են դառնում միայն բաժանվող բջիջներում
- կորիզաթաղանթում առկա խոշոր ծակոտիներն ապահովում են սպիտակուցների, ածխաջրերի, լիպիդների, ոլիպոնուկլեինաթթուների, ջրի և զանազան իոնների կորիզից ցիտոպլազմա և հակառակ ուղղությամբ տեղափոխումը
- կորիզաթաղանթի արտաքին թաղանթը պատված է ոլիպոսմներով և Գոլջիի ապարատի և էնդոպլազմային ցանցի խողովակների հետ առաջացնում է ընդհանուր համակարգ
- կարիոպլազման քրոմոսոմների ներքին միջավայրն է

43

## Նշված էկոլոգիական գործոններից որո՞նք արիտուկ չեն: Նշել բոլոր ճիշտ պնդումները.

- ջերմոցների ստեղծումը
- կոռպերացիան
- հողի քիմիական կազմությունը
- մարդու տնտեսական գործունեությունը
- խոնավության պակասը անապատներում
- մրցակցությունը
- սեզոնային երևույթները

44

**Գլխուղեղի կեղևի ո՞ր գոտին (նշված է ձախ սյունակում) կեղևի ո՞ր մասին (նշված է աջ սյունակում) է համապատասխանում:** Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Կեղևի գոտի

Կեղևի մաս

- |                             |                                 |
|-----------------------------|---------------------------------|
| A. խոսքի                    | 1. ճակատային բիլթ               |
| B. տեսողական                | 2. ծոծրակային բիլթ              |
| C. մաշկամկանային զգայության | 3. քունքային բիլթ               |
| D. լսողական                 | 4. քունքային բլթի ներքին մաս    |
| E. հոտառական                | 5. կենտրոնական ակոսի ստորին մաս |
| F. ճաշակելիքի               | 6. գագաթային բիլթ               |
| G. շարժողական               |                                 |

45

**Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «Ճիշտ է», «Սխալ է», «Զգիտեմ» պատասխաններից մեկը.**

1. ԴՆԹ-ի կազմում հանդիպող պիրիմիդինային ազոտական հիմքերն ունեն միզարբվի նման կառուցվածք
2. սպիտակուցները կենդանի օրգանիզմների բջիջներում հանդիպող ամենաերկար կենսաբանական պոլիմերներն են
3. ԴՆԹ-ի մեկ շղթայում նուկլեոտիդները միմյանց են միանում մեկ նուկլեոտիդի ֆոսֆորական թթվի և մյուսի ածխաջրային մնացորդի միջև առաջացող ջրածնային կապով
4. ԴՆԹ-ի մեկ շղթայում աղենինային նուկլեոտիդի քանակը միշտ հավասար է թիմինային նուկլեոտիդի քանակին
5. ԴՆԹ-ի մեկ շղթայի Ա-Ա-Գ-Ց-Թ հաջորդականության դեպքում մյուսում նուկլեոտիդների հաջորդականությունը կլինի ՈՒ-ՈՒ-Ց-Գ-Ա
6. ԴՆԹ-ի մոլեկուլում նուկլեոտիդներից կազմված երկու շղթաներն իրար հետ միանում են ազոտական հիմքերի միջև առաջացող ջրածնային կապերի միջոցով

## Բ մակարդակ

46

Ինչպիսի՞ն է արյան հաջորդական ուղին ձկների արյունատար համակարգում՝ սկսած սիրտ մտնելու պահից: Նշել պատասխանը՝ չխախտելով հերթականությունը.

1. փորոք
2. դեպի սիրտ տանող երակներ
3. փորային առտա
4. մեջքային առտա
5. նախասիրտ
6. խոիկային թերթիկների մազանոթներ
7. ներքին օրգանների մազանոթներ

47

Ի՞նչ հաջորդականությամբ է անցնում գրգիռը թքազատության պայմանական ռեֆլեքսի ռեֆլեքսային աղեղով: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. նյարդային ազդակի հաղորդում ժամանակավոր կապով
2. նյարդային ազդակի հաղորդում շարժողական նյարդով
3. թքազատության հրահրում
4. տեսողական նյարդով նյարդային ազդակի անցում մեծ կիսագնդերի կեղևի տեսողական գոտի
5. աչքի ցանցաթաղանթի ընկալիչների գրգռում լույսով
6. մեծ կիսագնդերի կեղևի սննդառական կենտրոնի դրդում

48

Ինչպիսի՞ն է մարսողության ընթացքում գործընթացների հաջորդականությունը: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. ճարպաթթուների և գլիցերինի փոխազդում միաշերտ էպիթելի բջիջներում
2. ներծծում
3. ճարպերի թափանցում ավշային մազանոթներ
4. ածխաջրերի ճեղքում թույլ հիմնային միջավայրում
5. ենթաստամոքսայութի և աղիքայութի ֆերմենտների ակտիվություն
6. օրգանիզմին բնորոշ ճարպերի առաջացում
7. սպիտակուցների բնափոխում թթվային միջավայրում
8. նուկլեինաթթուների ճեղքում

49

Ինչպիսի՞ն է արյունատար համակարգի անոթների ճյուղավորման հաջորդականությունը մարդու արտազատության համակարգում:  
Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. փոքր լուսանցքով երակի առաջացում
2. մազանոթների միացում
3. արտատար զարկերակի ճյուղավորում մազանոթների
4. մանր զարկերակների առաջացում
5. երիկամային զարկերակի ճյուղավորում
6. երիկամային երակի առաջացում
7. առբերող զարկերակի ճյուղավորում մազանոթների

50

Ո՞ր գործառույթը (նշված է ձախ սյունակում) մարդու ծայրամասային նյարդային համակարգի ո՞ր բաժնի (նշված է աջ սյունակում) կողմից է իրականացվում: Նշել համապատասխանությունն ըստ հերթականության.

Գործառույթ

Ծայրամասային նյարդային համակարգի բաժին

- |  |   |
|--|---|
| A. լայնացնում է աչքի բիբը                                  | 1. վեգետատիվ նյարդային համակարգի պարասիմպաթիկ բաժին |
| B. նվազեցնում է սրտի կծկումների հաճախականությունը          | 2. մարմնական նյարդային համակարգ                     |
| C. ապահովում է կամային շարժումների իրականացումը            | 3. վեգետատիվ նյարդային համակարգի սիմպաթիկ բաժին     |
| D. ուժեղացնում է մակերիկամներում աղբենալինի արտադրությունը |   |
| E. մեծացնում է սրտի կծկումների ուժը                        |   |
| F. բուլացնում է ջրի հետադարձ ներծծումը երիկամներում        |   |
| G. նյարդավորում է միջածիզ զոլավոր մկանները                 |   |

51

Արյան շրջանառության համակարգում առկա ո՞ր փականների գործառույթները (նշված են ձախ սյունակում) ո՞ր փականներին (նշված են աջ սյունակում) են համապատասխանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Փականների գործառույթներ

Փականներ

- |  |                 |
|--|-----------------|
| A. շարակցահյուսվածքային թելիկներով ամրացած են աջ փորոքի պատերին        | 1. եռափեղկ      |
| B. խոչընդոտում են արյան հետադարձ շարժմանը թռքային զարկերակից դեպի սիրտ | 2. երկփեղկ      |
| C. խոչընդոտում են արյան հետադարձ շարժմանը ձախ փորոքից ձախ նախասիրտ     | 3. կիսալուսնաձև |
| D. ապահովում են արյան միակողմանի հնոքը երակներում                      |                 |
| E. գտնվում են ձախ փորոքի և առտայի միջև                                 |                 |

52

Բաժանման ո՞ր պրոցեսը (նշված է ձախ սյունակում) քջի բաժանման ո՞ր ձևին և փուլին (նշված են աջ սյունակում) է համապատասխանում: Նշել ճիշտ համապատասխանություններն ըստ հերթականության.

Բաժանման պրոցես

Քջի բաժանման ձև և փուլ

- A. հապլոիդ թվով երկրորդատիղային քրոմոսոմներն ապապարուրվում են
- B. հոմոլոզ քրոմոսոմները դասավորվում են մեկ հարթության վրա՝ կողք կողքի
- C. տեղի է ունենում ցիտոպլազմայի բաժանում, ձևավորվում են դիպլոիդ քջիջներ
- D. հոմոլոզ քրոմոսոմները դասավորվում են իլիկի հասարակածային գոտում՝ դեմ դիմաց
- E. սկսում է ձևավորվել բաժանման իլիկը, տեղի է ունենում հոմոլոզ քրոմոսոմների կոնյուգացիա և տրամախաչում
- F. ցենտրիուլները տարամիտվում են դեպի տարբեր քևեռներ, սկսում է ձևավորվել բաժանման իլիկը, հոմոլոզ քրոմոսոմներն առանձին-առանձին են

53

Չափանիշների ո՞ր բնութագիրը (նշված է ձախ սյունակում) տեսակի ո՞ր չափանիշին է (նշված է աջ սյունակում) համապատասխանում: Նշել ճիշտ համապատասխանությունը.

Չափանիշի բնութագիր

Տեսակի չափանիշ

- A. առանձնյակներն ունեն ներքին և արտաքին կառուցվածքների նմանություն
- B. նոյն տեսակի առանձնյակներն ունեն միանման գնացք
- C. առանձնյակների կենսագործունեության գործնականություն նմանություն
- D. քրոմոսոմների քանակի, ձևի, չափսերի նմանություն
- E. յուրաքանչյուր տեսակ զբաղեցնում է խիստ որոշակի արեալ
- F. տեսակը գոյատևում է միայն որոշակի պայմաններում

## Նշել բոլոր ճիշտ պնդումները.

- կապտականաչ ջրիմուռների որոշ տեսակներ ֆիքսում են մքնողորտային ազոտը
- բջջում օրգանական նյութերը՝ ածխաջրերը, լիափիները, սպիտակուցները,
- նուկլեինարթունները սինթեզվում են անարողիզմի արդյունքում
- բջիջների մեծ մասում ցիտոպլազմայի ռեակցիան բույլ հիմնային է, որը այսպիսակ է բջջում առկա ջրի մոլեկուլների դիպոլային հատկություններով
- պլազմային թաղանթով նյութերի տեղափոխումը բարձր խտությունից դեպի ցածր կատարվում է առանց արտաքին էներգիայի ծախսի
- գլյուկոզի՝ մինչև պիրոխաղողաթթվի ճեղքման արդյունքում աճացածվում է 150 կ.Զ/մոլ էներգիա, որի մեծ մասը (60 %) պահեստավորվում է ԱԵՖ-ի ձևով, իսկ մյուս մասը (40 %) ցրվում է որպես ջերմային էներգիա
- մկանային բջիջների ցիտոպլազմայում պահպանվում է կացիումի իոնների շատ ցածր խտություն՝ սարկոպլազմային ցանցի շնորհիվ
- գենետիկական գաղտնագիրն օժտված է ավելցուկայնությամբ, քանի որ նուկլեոտիդների մեկ եռյակը կարող է կոդավորել 1-6 ամինաթթուների
- շրջակա միջավայրում նատրիումի իոնների պարունակությունն ավելին է, քան կենդանի բջիջներում, իսկ կալիումի իոնների պարունակությունը կենդանի բջիջներում է ավելին, քան շրջակա միջավայրում

## Նշվածներից ո՞րը ոռությունուն չէ: Նշել բոլոր ճիշտ պնդումները.

- չղջիկի թևերը
- մրջնակերների ատամները
- ձիերի եռամատ վերջույթները
- մարդու ականջախեցին շարժող մկանները
- մարդու մոտ պոչի առկայությունը
- մարդու երրորդ կոպը
- վիշապների վերջույթների մնացորդները

## Նշել բոլոր սխալ պնդումները.

- բակտերիաների սպորագոյացման ժամանակ բջջի պարունակությունը սեղմվում է, և հիմնական թաղանթի վրա առաջանում է նոր, ավելի խիտ թաղանթ
- երբ պոլիա հիդրայի խայթող բջջը մահանում է, միջակա բջջից առաջանում է նոր խայթող բջջ
- պոլիա հիդրայի սննդանյութերի մարսումը կատարվում է աղիքի խորշում և էկտոռերմի մարսողական հյութ արտադրող բջիջներում
- պոլիա հիդրան բարենպաստ պայմաններում բազմանում է բողբոջմամբ. արտափափում են մարմնի արտաքին և ներքին շերտերը
- պոլիա հիդրան հերմաֆրոդիտ է, անբարենպաստ պայմաններում բազմանում է սեռական եղանակով
- հողաբափիկ ինֆուզորիայի մեծ կորիզը կարգավորում և վերահսկում է շարժման և նյութափոխանակության գործընթացները

## Նշել բոլոր սխալ պնդումները.

1. ճարպերը կազմում են մարդու արյան պլազմայի 0.5-1%-ը
2. ֆերմենտներից գուրք արյան պլազման կոչվում է շիճուկ
3. ֆիբրինը չի լուծվում արյան պլազմայում
4. անօրգանական աղերը կազմում են արյան պլազմայի 0.09%-ը
5. արյան մակարդմանը նպաստում են կալցիումի իոնները,  $K$  վիտամինը, թրոմբինը
6. բարձր ջերմաստիճանը դանդաղեցնում է արյան մակարդումը, քանի որ նվազում է այդ գործընթացին մասնակցող ֆերմենտների ակտիվությունը
7. լյարդում հեպարինի սինթեզի անբավարարության հետևանքով կարող է զարգանալ սակավարյունություն
8. սիմպաթիկ նյարդային համակարգի ակտիվացումը խթանում է թքարտադրությունը

## Նշել մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող բոլոր սխալ պնդումները.

1. բոլոր զգայարաններից ազդակները հաղորդվում են երկարավուն ուղեղ, ապա ուղեղաբնով հասնում տեսաքումբ, որտեղ ազդակները ճանաչվում են,
2. գնահատվում և հաղորդվում են մեծ կիսագնդերի կեղևի համապատասխան գոտի
3. ներքին ականջի խխունջը լսողական բուն օրգանն է, որն ընկալում է ձայնային ազդանշանը և վերլուծում ստացված տեղեկատվությունը
4. ավիշը տարբերվում է արյան պլազմայից սպիտակուցի ավելի քիչ պարունակությամբ
5. լյարդում սինթեզվում են հեպարինը, ֆիբրինը և պրոթրոմբինը, որոնք հետագայում անցնում են արյան պլազմա
6. C վիտամինն ամրացնում է ոսկրերը, ատամները

## Նշել մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող բոլոր սխալ պնդումները.

1. գանգի ոսկրերը միացած են անշարժ և շարժուն միացումներով
2. վահանաձև գեղձի գերգործառույթի դեպքում զարգանում է կրետինիզմ
3. ծարավի, հազեցման, նյութափոխանակության կարգավորման կենտրոնները տեղակայված են տեսաքրմում
4. վեգետատիվ նյարդային համակարգի բարձրագույն կենտրոնները տեղակայված են ենթատեսաթմբում
5. լսողական ընկալիչները գտնվում են լսողական փողում
6. թրոմբոցիտն ունի երկգործակոր սկավառակի ձև
7. կմախքային մկանները ոսկրերին սպառաբար ամրանում են ջլերով

60

Մարգագետինը մեկ տարվա ընթացքում ստացել է  $5 \cdot 10^{10}$  կՕ/հա արեգակնային ճառագայթման էներգիա: Մարգագետնի մեկ հեկտարի վրա մեկ տարվա ընթացքում աճում է 12000 կգ խոտ: Քանի<sup>o</sup> կՕ էներգիա է կուտակվում 1 գ առաջնային կենսագովածում, եթե ֆուտոսինթեզի օգտակար գործողության գործակիցը 0,6 % է:

- (61-62) Օրգանիզմում գլյուկոզի ճեղքման պրոցեսում օգտագործվել է 30 մոլ  $O_2$ , և էներգիայի կորուստը կազմել է 9840 կՋոուլ: 1 մոլ գլյուկոզից մինչև կաթնաքրու ճեղքման ընթանուր էներգիան կազմում է 200 կՋոուլ, իսկ ԱՎՖ-ից ԱԵՖ-ի սինթեզի համար անհրաժեշտ է 30 կՋոուլ/մոլ էներգիա:

61

Քանի<sup>o</sup> մոլ ջուր է անջատվել անթրվածին փուլում:

62

Քանի<sup>o</sup> մոլ ԱԵՖ է սինթեզվել այդ ընթացքում:

63

Ֆուռսինթեզի ժամանակ կլանվել է  $6,72 \text{ m}^3 \text{ CO}_2$ : Որքա՞՞ն օրգանական նյութ (գյուկոզ) է սինթեզվել այդ ընթացքում (զրամ), եթե 1 մոլ զազր պարունակում է  $22.4 \text{ լիտր}$  ծավալ:

- (64-65) Ծամբ ֆիզիկական աշխատանք կատարող մարդու արյան մեջ դիֆուզվել է  $720 \text{ լ}$  թթվածին: Աշխատանքի ժամանակ շնչառական շարժումներն արագացել են 2 անգամ, շնչառական օդի ծավալը մեծացել է  $1,5$  անգամ, օրգանիզմում յուրացվող թթվածնի ծավալն աճել է  $20\%-ով$ , սրտի կծկումների հաճախականությունն աճել է  $2$ , իսկ մեկ կծկման ժամանակ փորոքից արտամղված արյան ծավալը՝  $1,2$  անգամ: Ընդունել, որ հարաբերական հանգստի վիճակում մարդու 1 րոպեում արթուն ժամանակ կատարում է  $16$  շնչառական շարժում, սրտի բոլորաշրջանի տևողությունը՝  $0,8$  վրկ, և մեկ կծկման ժամանակ փորոքն արտամղում է  $70 \text{ մլ}$  արյուն:

64

Քանի՞ րոպե է տևել ծանր ֆիզիկական աշխատանքը:

65

Աշխատանքի ընթացքում քանի՞ մմ<sup>3</sup> արյուն է ստացել մեկ նեֆրոնը, եթե երիկամները ստանում են մեծ շրջան մղված արյան ծավալի  $20\%-ը$ :

- (66-67) Ալիքաձև մազերը ստացվում են որպես միջանկյալ հատկանիշ, եթե ծնողներից մեկն ունենում է գաճագործ մազեր, իսկ մյուսը՝ ուղիղ: Ալիքաձև մազերով և արյան I խմբով տղամարդն ամուսնացել է ուղիղ մազերով և արյան IV խմբով կենց հետ:

66

Որոշել գաճագործ մազերով երեխա ծնվելու հավանականությունը (%-ով):

67

Որոշել ըստ տվյալ հատկանիշների երկինտերոզիվոտ երեխայի ծնվելու հավանականությունը (%-ով):

- (68-69) Օրվա ընթացքում մարդու մաշկի մակերևույթից գոլորշիացել է 0,4 կգ քրտինք:

68

Որոշել օրվա ընթացքում մարդու մաշկի  $1\text{m}^2$  մակերևույթից ճառագայթված զերմային էներգիայի քանակը ( $\Omega$ -ով), եթե մաշկի մակերեսը  $2\text{m}^2$  է: Հաշվի առնել, որ մաշկի մակերևույթից ճառագայթվող զերմային էներգիան 3 անգամ գերազանցում է գոլորշիացնան միջոցով հեռացվող էներգիայի քանակը և 1 գ քրտինքի գոլորշիացնան համար ծախսվում է  $2,45 \Omega$  էներգիա:

69

Ընդամենը քանի՞ գրամ քրտինք կգոլորշիացվեր մաշկի մակերևույթից, եթե ճառագայթված էներգիան նույնական ծախսվեր քրտինքի գոլորշիացնան համար:

**Մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «Ծիշտ է», «Սխալ է», «Զգիտեմ» պատասխաններից մեկը.**

1. մեծ կիսագնդերի կեղևում տեղակայված բարձրագույն շնչառական կենտրոնները կարգավորում են շնչառության հաճախականությունը խոսելու ընթացքում
2. շնչառության համակարգի աշխատանքը կարգավորող կենտրոնները գտնվում են երկարավուն ուղեղում, ուղեղիկում, մեծ կիսագնդերի կեղևում
3. արթուն ժամանակ մարդը մեկ րոպեում կատարում է 75 շնչառական շարժում
4. շնչառությունը ենթարկվում է կամային կարգավորման
5. շնչառության կարգավորման բարձրագույն կենտրոնները գտնվում են ենթատեսաթմբում
6. երկարավուն ուղեղի շնչառության կենտրոնից մոտավորապես չորս վայրկյանը մեկ նյարդային ազդակներ են հաղորդվում միջկողային մկաններին և ստոծանուն